

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սիամի քաղաքապետի խոսք :

Եւրոպացի մատենագիրներէն անոնք որ Սիամի թագաւորութեան վրայ խօսած են , առանց ստոյգ տեղեկութիւններ ունենալու շատ բաներ հնարած են այս երկրիս վրայօք , կամ գոնէ չափազանց զուրցուածքներ բանեցուցած են , ինչպէս որ վերջերս ալ օրագրիս մէջ քանի մը տողով յիշեր էինք ' Սիամի թագաւորութեան մէջ եղած պատիժներուն վրայօք անոնց զուրցածը : Սակայն ետքի ժամանակներս Ռալֆուս անուամբ եպիսկոպոսը , որ երկար առտենէ 'ի վեր նոյն երկրին մէջ քարոզչութեան պաշտօնին բոլորովին ինքզինքը նուիրած է , 'սէրաֆիք Բաֆա-որու-Բեան Սիամայ անուամբ ընտիր գրուածք մը հրատարակեց , որուն մէջ ճիշդ , ընդարձակ ու ապահով ծանօթութիւններ կու տայ այս աշխարհքին վրայ : Ս'ենք ալ այս գրքէն ամենահարկաւոր ու էական մասերը քաղելով՝ հետեւեալ համառօտ տեղեկութիւնը կը հաղորդենք մեր ընթերցողներուն :

Եւրոպացիք Սիամ կ'ըսեն , տեղացւոց բնիկ լեզուով կը կոչուի Սիւանկ-Սայ (Սքատաց թագաւորութիւն) . հին ատեն կ'անուանէր Սայամ (ցեղ թիագունից) , ոսկից ելած է Սիամ անուանակոչութիւնը : Տարածութիւնը կը ձգուի հիւսիսային լայնութեան 4 աստիճանէն ինչուան 22 աստիճանը , որ է ըսելիքը 450 գաղղիական փարսախի երկայնութիւն : Իր մեծագոյն լայնութիւնը արեւելքէն դէպ 'ի արեւմուտք՝ մօտ 450 փարսախ է , սկսեալ արեւելեան երկայնութեան 96 աստիճանէն մինչև 102 աստիճանը : Հիւսիսային կողմէն իրեն սահման են այլ և այլ իշխանութիւններ , որոնք Սիւայի կամ Չինաց հարկատու են . արեւելքէն՝ Սիամի պետութիւնը . արեւմուտքէն՝ ծովը և Սնգղիա

ցւոց Սալագգայի մէջ ունեցած կալուածները . հարաւէն՝ Սահանկ և Ռեւահ փոքրիկ թագաւորութիւնները : Սիամի թագաւորութեան ամբողջական տարածութիւնը Ռալֆուսի ըսածին նայելով՝ գրեթէ 12,330 աշխարհագրական քառակուսի մղոն է : Եւրոպացիներէն Սիամի պետութեան , նաև խել մը պզտիկ թագաւորութիւններ ու տերութիւններ , որոնց գլխաւորներն են հետեւեալները . Իկուրի թագաւորութիւնը՝ հարաւային կողմը , Վամպոճ՝ արեւելեան կողմը , և Լայո՝ հիւսիսային կողմը :

Բնակչաց թիւը երկրին ընդարձակութեանը համեմատութեամբ քիչ է . և ըստ ստուգագոյն հաշիւներու՝ 6,000,000 հոգիէ աւելի չեւեր , որոնք այլ և այլ ազգերէ բաղկացած են՝ շուրջ շուրջանակի այս բաժանմամբ . Սիամացի կամ Սայ՝ 1,900,000 . Չինացի՝ 1,500,000 . Սալագի՝ 1,000,000 . Լայո՝ 1,000,000 . Վամպոճացի՝ 500,000 . իսկ մնացածներն ալ ուրիշ մերձակայ ազգերէն են :

Սիամի երկիրն ընդհանրապէս դաշտային է , և մէջի եղած լեռանց գօտիները շատ բարձրութիւն մը չունին : Իր գլխաւոր գետն է Սէ-Սամ , որ կը բղխի Չինաստանի Եւր-Սան գաւառէն , և Չինք Սան-քինկ-հօ անունը կու տան անոր : Սիկայ իր ընթացիցը մէջ , որուն երկայնութիւնը գրեթէ 300 փարսախ տեղ է , շատ գետեր կ'ընդունի , որոնք զգալի կերպով իր ջրերը կը շատցընեն . և խել մը առաջքներ բաժնուելով՝ Վանքոքի , տերութեան մայրաքաղաքին մօտերը ծով կը թափի : Եւրոպացիք այս գետին մատուցած օգտակարութիւնը , որովհետև հրեկա-Չինաստանի այս կեղծոնական աշխարհքին միակ նաւարկելի գետն է . ասոր միջոցով կ'ըլլան ամէն հաղորդակցութիւններն ու երկրին բոլոր վաճառականութիւնը , և Չինաստանի հարաւային գաւառներուն հետ վերաբերութիւնը :



Սիւմացի

Ալիմայն ըստ տեղեաց և ըստ դրից
կը զանազանի : Տաքութիւնը սաստիկ
է, բայց այնու հանդերձ անտանելի
չգար . վասն զի տաք եղանակներուն
առատ անձրեւներ անպակաս են : Այն
մեծ դաշտին մէջ, ուր որ միշտ ծովու
վրայէն կը փչէ քամին, օդը շատ առողջ
արար է . իսկ երկրին ներսերը, թան-

ձրախիտ անտառներով ծածկուած բը-
լուրներու և լեռանց վրայ՝ ամենաշնա-
տակար տենդեր կը գտնուին :

Նիշդ խօսելով՝ Սիւմի մէջ երկու
եղանակ միայն կայ կրնայ ըսուիլ, որոնք
են անձրեւի ու չորութեան եղանակնե-
րը, որոնց վրայ մեծ ազդեցութիւն ու-
նին հոնտեղը տիրող հարաւային արե-

մտեան , և հիւսիսային արեւելեան ճա-
նաչ ըստած ուժգին քամիները : Առա-
ջին քամին կը սկսի մարտի , որն որ օ-
գոստոսի՝ արեւմտեան կը փոխուի . իսկ
երկրորդը կը սկսի սեպտեմբերի , որ
մերթ հիւսիսէն և մերթ ալ հիւսի-
սային արեւելքէն կը փչէ . ասիկայ ալ
հարաւային արեւելեան կը փոխուի փե-
տրուար ամսոյն , ետքը հարաւային , և
հուսկ ուրեմն՝ մարտի մէջ հարաւային
արեւմտեան : Ինչքանի եղանակը հարա-
ւային արեւմտեան քամիներուն միջոցը
կ'իյնայ , իսկ չորութեան եղանակը հիւ-
սիսային քամիներուն հետ մէկտեղ կը
սկսի : Այս ուղիւ Վաղղիացոց պա-
տուիրակը՝ , որ խել մը տարի այն եր-
կիրը բնակած է , կ'ըսէ թէ Սիամացիք
երեք եղանակ կը բաժնեն տարին . Նա-
խա , որ կը նշանակէ՝ սկիզբն ցրտոյ
(դեկտեմբեր և յունուար) . Նախն ,
այսինքն՝ սկիզբն ջերմութեան (փե-
տրուար , մարտ , ապրիլ) , որ իրենց պզտի
ամսուն է . և Նախն-էն , որ ըսել է՝
սկիզբն սաստիկ ջերմութեան (մայիսէն
ինչուան դեկտեմբեր) , և կամ իրենց
մեծ ամսուր , որ կարգէ դուրս տաք կ'ը-
նէ : Իսկ ջերմութեան սաստկութիւ-
նը հարկերորդամասնեայ ջերմաչափով
10^{էն} ինչուան 30 աստիճան կ'ելլէ կ'ինջ
նայ ըստ եղանակաց :

Երկրին զլիաւոր հիւանդութիւնը
տղոց համար մէյ մը ծաղիկը , և մէյ
մըն ալ ճճիի հիւանդութիւնն է , և
թէպէտ պատուաստի գործածութիւնը
հոն ալ սկսած է , բայց անով հանդերձ
տղոց իրեք մասին մէկը այն հիւանդու-
թեամբ կը մեռնի : Իսկ փորհարութե
հիւանդութիւնը՝ չափահասներուն սո-
վորական է , թէպէտ ասկէջ դիւրաւ կը
բժշկուին : Բնդհատ տենդերը նոյնպէս
սովորական են աս կողմերը , բայց այն-
չափ վտանգաւոր չեն . ընդհակառակն
լար՝ ըստած տենդերը զրեթէ միշտ մա-
հաբեր են , այլ բարեբաղդաբար քիչ կը
հանգիստի աս տեսակը : Ինչուան հիմա
երեսուն տարի մը կայ որ ասիական

մաղձացաւ՝ երբեմն երբեմն կ'երեւայ
հոն և առաւել կամ'նուազ ջարդ կ'ընէ :
Սիամացիք կը պնդեն թէ բոլոր իրենց
հիւանդութիւնները քամիէն առաջ կու-
գան , և երբոր պիտի ըսեն թէ մէկը հիւ-
ւանդ է՝ կ'ըսեն թէ քամին զարկեր է
այն մարդը . և որպէս զի հիւանդին
մարմնէն հեռացնեն զանիկայ , շատ
կը գործածեն քափուր՝ , ասինիւսֆ , պըղ-
պեղ , կոճապղպեղ՝ , և ուրիշ զրգուիչ
նիւթեր :

Սիամի մէջ երկու տեսակ բժշկու-
թեան գործածական դրութիւն կայ ,
մէյ մը չինական , և երկրորդ՝ հնդկա-
կան դրութիւնները : Զին բժիշկները
խիստ վարպետ են հիւանդին երակին
դիտողութեան մէջ , ուսկից որ կը գու-
շակեն հիւանդին ներքին վիճակը և հիւ-
ւանդութեան նշանները , թէպէտ աս
գործողութիւններս ընելու համար շատ
ատեն կ'անցնեն երկայն բարակ քննու-
թիւն ընելով . և դեղի համար ընդ-
հանրապէս տեսակ տեսակ արմատնե-
րու ճահպանութիւն կը խնցրեն հիւանդին ,
զորոնք շատ անգամ արմատներէ զատ՝
նաև փայտի կեղևներէ , չորցած տերեւ-
ներէ , ոսկրէ , միջատներէ և ինչուան
չորցած նեսուկներէ կը շինեն : Իսկ
սիամացի բժշկաց դեղարարութեան
կերպը տարբեր է առջինէն , և փոշիի
կամ հատադեղի կը վերածեն ամէն
դեղ . աս դեղերս կը կազմեն բոյսե-
րէ , ծաղիկներէ , արմատներէ և հո-
տաւէտ փայտերէ . իսկ հիւանդին տա-
լու համար՝ կը լուծեն փոշին կամ հա-
տադեղը պզտիկ թաս մը եղկ ջրոյ
մէջ , որով զանոնք առնելը շատ դիւ-
րին է : Այս տեսակ դեղերը թէպէտ
ամէն անգամ չեն առողջացրներ զմարդ ,
բայց զոնէ մնաս ալ չեն ընէր : Ուրիշ
կողմանէ , Սիամացիք բժշկութեան վե-
րաբերեալ ընտիր զրբեր շատ ունին , և
մասնաւորապէս բուսական զոյացու-
թեանց զօրութեանն ու յատկութիւն-
ներուն վրայ . ինչպէս նաև զօրաւոր և
ազդու դեղերու բաղադրութեանց բաղ-

1 Գղ. Envoýé.

2 Գղ. Fièvres malignes.

1 Գղ. Choléra.

3 ՏՃ. Զէնճէֆէ :

2 ՏՃ. Քէսֆէրի :

մաթիւ հոսսիսաներ ունին : Իրենց բը-
ժիշկները , որոնք բազմութիւն են , առ-
ջի ութը տասը տարիները ընդհանրա-
պէս փորձով կ'անցընեն ինչուսն որ կա-
մաց կամաց վարժին , և որովհետեւ եր-
կրին դեղական նիւթերն ալ խիստ ա-
ղէկ են , անոր համար ասանկ երկար
փորձառութեամբ մը բաւական լաւ կը
հոգան հիւանդները և որչափ կարելի
է կ'առողջացընեն զանոնք :

Կը շարունակուի :

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Թովմաս Կրէյ :

Իրագրաց մէջ այս մօտերս կը կար-
դանք թէ Միգղիոյ գիւղաքաղաք մը
Խոտս անունով մէկը արձան մը պիտի
կանգնէ իւր հայրենակցին՝ Թովմաս
Կրէյի : Ո՛վ էր արդեօք այս Թովմաս
Կրէյը : Ո՛ր է թշուառ հնարագէտ մը ,
որ բոլոր ունեցածը շռայլեց երկաթու-
ղիներն հասարակ ճամբաներուն տեղը
փոխանակելու : Երբ 1818^{ին} դեռ և
ոչ մէկու մը միտքն ինկեր էր երկաթու-
ղոյն գաղափարը , ինքը տեղեկութիւն-
ներ գրեց իր քննութեանցը վրայ Ուիլ-
սըն անունով անգղիացւոյ մը , և Իզա-
պոյ անունով գաղղիացի տնտեսականի
մը , որ դեռ ողջ է : Ինքը այս տեղե-
կութիւններն անոնց ձեռքն յանձնելու
ատեն ըսաւ . “ Ե՛հաւասիկ հոս կը գրտ-
նենք աշխարհքիս քաղաքականութեան
արշալոյսը . ասկէ վերջն ալ հեռաու-
րութիւն չկայ . շուտ մը ընկերութիւն-
ներ պիտի կազմուին . դրամոց մեծամեծ
գումարներ իրենց գործածութիւնը պի-
տի գտնեն . իմ գրութիւնս օտար եր-
կիրներ ալ պիտի ընդունին . իմ գիւտս
տպագրութեան գիւտին նման է ” :

Ե՛յս ձեռագիրն որ Ուիլսընի ու Ի-
զապոյի յանձնեց , Թովմաս Կրէյ տպել
ալ տուաւ , ու օրինակ մըն ալ Միգղիոյ
պաշտօնէից գլխաւորին խրկեց , որն որ
ուրիշ բաներու զբաղած ըլլալով և ոչ

պատասխան տուաւ : Ի վերայ այս ար-
մենայնի Թովմաս Կրէյի գրուածքն
այնպիսի յաջողութիւն գտաւ , որ քանի
մը տարի ետքը բոլոր Միգղիա երկաթ-
ուղիներով շրջապատեցաւ . Մերիկան
ու Եւրոպան շուտ մը Միգղիոյ օրինա-
կին հետեւեցան . իսկ Թովմաս Կրէյը ,
որ աշխարհքիս վրայ այսպիսի մեծ նո-
րոգութեան մը սկիզբն եղաւ , և ոչ
յիշող մը կար : Ուիլսըն 1840^{ին} Միգղիա
գաւնալով Եւրոպիոյ ցամաքէն , ուր
մեծամեծ գործառնութեանց ձեռք զար-
կեր էր երեսուն տարիի չափ ու իր դրա-
մագլուխը պառկեցուցեր , ետեւէ եղաւ
Թովմաս Կրէյը փնտռելու . բայց անոր
անունը գիտցող մըն ալ չկար : Երկաթ-
ուղիները առատ շահ կը բերէին , այս
գիւտս ամէն տեղ կը տարածուէր , և
անոր գտնողը մարդ չէր ճանչնար : Ուիլ-
սըն օր մը Եփսոզըր քաղաքը դնացած
ըլլալով , ճամբան ապակեգործ մը տե-
սաւ , որուն գծագրութիւնը իրեն ծա-
նօթ եկաւ . մօտեցաւ անոր , որ ընկ-
աւեր էր աւելի աշխատութենէ քան
թէ տարեօք , ու այն տառապեալ գոր-
ծաւորը մեր ժամանակացս հրաշալի
գիւտին հնարողը ճանչցաւ : Խեղճ
Թովմաս Կրէյ իր ծերութեան վերջի
օրերը պատուհանաց ապակի անցընե-
լով կ'ապրէր , որ բոլոր ունեցածը ծա-
խեր էր իր անմահական գիւտին յաջո-
ղութեանն համար : Եւաջին խօսքն որ
ըսաւ Ուիլսընի զանկիայ ճանչնալէն
վերջը , այս եղաւ . “ Հիմա համոզուած
ես որ իրաւունք ունիմ եղեր այնչափ
տարիներ անցընելու , որոնք ուրիշներուն ,
առանց օգտի չեղան . բոլոր նախատե-
սութիւններս կատարուեցան , մանա-
ւանդ թէ ակնկալութենէս աւելի ե-
ղան : Ե՛յս բանս միայն քեզի կ'ըսեմ ,
որովհետեւ զքեզ երկար ատենէ 'ի վեր
կը ճանչնամ . մարդու մը բան չեմ ըսած
իմ գիւտիս վրայ , որպէս զի զիս խեն-
թի տեղ չդնեն ” : Ուիլսընի սիրտը
շարժելով աչքէն արտասուք եկաւ , ու-
զեց քսակը այն մուրացիկ մեծահանձաք
մարդուն տալ . բայց Թովմաս Կրէյ
վսեմական ժխտողութեամբ մը ըսաւ